ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ Ամենապատիվ Տ. Գևորգ Սրբազան Արքեպիսկոպոսը ուղարկել է հետևյալ հեռագիրը ՍՍՌՄ Ժողկոմսովետի նախագահ Սովետական Միության մարշալ **ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻՆ**

ՄՈՍԿՎԱ, ԿՐԵՄԼ

ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻՆ

Այս հիշատակաց արժանի օրերին, երբ փառապանծ Կարմիր Բանակը ցուցաբերելով քաջության անօրինակ հրաշքներ, վտարում է թշնամուն մեր սրբազան Հայրենիքի սահմաններից, ես բաղդավոր եմ հաղորդելու այն արտաքո կարգի հաջողության մասին, որ ունեցել է Մեր տեղակալական կոնդակը ուղղված Արտասահմանի և մեր երկրի ամբողջ Հայության, նվիրված ազգերի ազատության մեծ գործին:

Հայ ժողովրդի հազարավոր զավակներ Միության մյուս եղբայրական ժողովուրդների զավակների հետ ազնվորեն կատարում են իրենց պարտքը հանդեպ Հայրենիքի, չխնայելով իրենց կյանքը, քաջաբար կռվում են բոլոր ճակատներում անօրեն թշնամու դեմ: Արտասահմանի հայությունն էլ հետևելով իր սիրած Էջմիածնի օրինակին և լսելով նրա հրավերը, բերում է իր սրտաբուղխ առատ նվերները ս. Սեղանին կառուցանելու համար Սասունցի Դավթի անվամբ տանկային շարասյուներ:

Տանկային առաջին շարասյունը, գեներալ-լեյտենանտ Կոբրեկովի հաղորդագրության համաձայն, արդեն իսկ հաջողությամբ կռվում է ճակատում: Սասունցի Դավթի անվան նվիրված տանկային երկրորդ շարասյան կառուցման համար էլ անընդհատ գալիս են դրամական նվիրատվություններ նախկին հաջողությամբ, որի գումարն այսօր 40·000 ամդոլլարից և 10·000 անգլիական ֆունտ ստերլինգից անցնում է: Վերջին օրերս Թեհրանի Հայությունից ստացել ենք հեռագրական հաղորդագրություն, որով հայտնում են, թե հօգուտ տանկային շարասյան կառուցման հանգանակված դրամը հասել է 1·745·000 ռիալի: Ստացվում են նաև գումարներ ճակատում կռվող մարտիկների ընտանիքներին օգնելու նպատակով:

Ընդունեցեք, թանկագին ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ, Մեր օրհնությունը և համախմբյալ հայ ժողովրդի ողջույնը:

Ազգընտիր Տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետության
ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆ